

ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ
(Մաս II. Ջոկի մարտակարգի տեսակները)

Երթային կարգը ռազմերթ կատարելու համար ջոկի շարժումն է ըստ շարասյունների: Այն պետք է ապահովի ջոկի արագընթաց տեղաշարժը, ժամանակին ծավալումը նախամարտակարգի, ապա՝ մարտակարգի, ապահովված լինի հակառակորդի կրակային խոցումից և հարմար՝ կառավարման համար: Ջոկի երթային կարգը կարող է լինել մեկ կամ երկու շարասյունով: Մեկ շարասյան դեպքում կողային դետքի առանձնացումով (նկ.1): Երկշարասյուն երթակարգը պատկերված է նկ.2-ում:

Նախամարտակարգը նշված բնագծերին հասնելուն պես երթային կարգից ծավալվելն է ըստ ճակատի ու խորության, սահմանված միջակայքով և հեռավորությամբ: Նախամարտակարգի դասավորությունը լինում է գծով. անկյունով առաջ, անկյունով ետ, սանդղաձև դեպի աջ կամ դեպի ձախ և այլն: Ամեն դեպքում նախամարտակարգը պետք է ապահովի մարտակարգին անցնելու արագ ծավալումը:

Մարտակարգը ջոկի դասավորությունն է մարտը վարելու համար:

Խմբի մի մասը (խոցման գոտում հայտնված) զբաղեցնում է պաշտպանական դիրք, կրակով կաշկանդում հակառակորդին և նրա ուշադրությունը շեղում դեպի իրեն՝ «ավելի շատ աղմուկ ու ծուխ»: Մյուս մասը (հակառակորդի կողմից հարձակման չենթարկված) շրջանցում է հակառակորդի դարանը և հարվածում նրան թևերից կամ թիկունքից: Շրջառումը պետք է իրականացվի արագ, գաղտնի, հնարավորինս շրջառելով հակառակորդին ամբողջությամբ: Շրջանցող խումբը միաժամանակ կրակ է բացում միայն հակառակորդի թև կամ թիկունք դուրս գալուց հետո և ոչնչացնում նրան:



Նկ.1

Նկ.2



Նախամարտակարգ «եռատերևուկ» և «շեղանկյուն»



Հակառակորդին հանկարծակի հանդիպելիս առավելությունը միշտ այն կողմում է, ով կրակում է առաջինը: Եթե խումբը հայտնաբերվել է հակառակորդի կողմից, ապա պետք է անմիջապես կրակ բացել նրա ուղղությամբ, հաշվի չառնելով ինչ ուժերի է նա տիրապետում: Մարտի առաջին պահերին առավելագույն խոցումը հասցվում է հրաձգային զենքերի և նռնականետերի խիտ կրակով, իսկ մերձամարտում՝ ձեռքի բեկորային նռնակներով: Խմբի գործողությունների շահերից ելնելով անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում ոչնչացնել (գերի վերցնել) հակառակորդի ամբողջ խումբը՝ թույլ չտալով նրա նահանջել և ռեզերվների հետ փոխգործակցել:

Հակառակորդի գերակշռող ուժերի հետ մարտի բռնվելիս կամ նրա զգալի ռեզերվների մոտեցման դեպքում, խումբը չպետք է ներգրավվի երկարատև պայքարի մեջ և թույլ տա, որպեսզի հակառակորդը խումբը կաշկանդի մերձամարտում, քանի որ մերձամարտը խմբին կզրկի հրետանու և ավիացիայի աջակցությունից՝ անձնակազմի համար վտանգավոր լինելու պատճառով: Սկզբում պետք է կրակով ճնշել հակառակորդին, ստիպել նրան պատսպարվել ինտենսիվ կրակից և դրանով իսկ ճնշել նշանառու կրակը: Հակառակորդին ճնշելու համար կիրառել ենթափողային նռնականետերը և ռեակտիվ հակատանկային նռնակները, կանխել խմբի հետապնդման փորձերը ականների տեղադրմամբ: Այնուհետև,կրակով և ականներով ծածկել խմբի մարտակարգի այն տարրի գլխամասային դետքի հեռացումը, որն ամենամոտն է հակառակորդին, մարտի վարման բնագծին կամ կրել է մեծ կորուստներ (ապահովել, առաջին հերթին, վիրավորների տարհանումը), իրականացնել առանձին ենթախմբերի հաջորդական ետ քաշումը (դետքերը, հաշվարկ-եռյակները և զույգերը):



Երթակարգում, նախամարտակարգում մարտիկների միջև հեռավորությունը որոշվում է ստորաբաժանման հրամանատարի կողմից՝ հաշվի առնելով տեղանքի բնույթը և իրավիճակի պայմանները: Շատ կարևոր է դետքերի մշտական կապը խմբի միջուկի հետ, որի համար սահմանվում են պարզ, հեշտ հիշվող տեսողական և ձայնային ազդանշաններ, ինչպես նաև ռադիոազդանշաններ: Տեսողական ազդանշանները տրվում են ձեռքի ժեստերով, զենքի դիրքի փոփոխությամբ, գլխարկի միջոցով, լապտերի լուսային ֆիլտրով: Ձայնային ազդանշանները պետք է ընդօրինակեն անտառի պատահական հնչյունները կամ կենդանիների, թռչունների ձայները, որոնք բնորոշ են տվյալ տարածքին, տարվա եղանակին և օրվան: Ռադիոյով ազդանշանները փոխանցվում են զումմերով կամ խոսափողը թակելով: Գլխամասային դետքը խնդիր ունի խմբի շարժման երթուղում տեղանքի հետախուզում իրականացնել և կանխել թշնամու հանկարծակի հարձակումը խմբի վրա: Որպես կանոն, գլխամասային դետքում ընդգրկվում են անաղմուկ կրակող զենքով (ԱԿԶ) զինված առավել պատրաստված, փորձառու զինծառայողները (Նկ.3):



Նկ.3 Գլխամասային դետքի սպառազինության տարբերակ

Աղբյուրը. https://vk.com/wall-127249967_19094?ysclid=m9enjnjuuy803997394